

Գրանցված է

Հայաստանի Հանրապետության

Կենտրոնական բանկում

« 24 » հոկտեմբերի 2012թ.

Նախագահ՝ Արթուր Զավադյան

**ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ
ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ
ՔԼԻՐԻՆԳԻ ԵՎ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ
ԿԱՆՈՆՆԵՐ**

Գլուխ 1. Հասկացություններ

- 1) Սույն կանոններում կիրառվող հասկացություններն ունեն սույն գլխով սահմանված նշանակությունները:
- 2) **«Շուկա»**. օրենքով և Օպերատորի կանոններով սահմանված կարգով վարկային ռեսուրսների հրապարակային առևտուր կազմակերպելու նպատակով Օպերատորի կողմից կազմակերպված վարկային ռեսուրսների շուկա:
- 3) **«Իրավասու հաշիվներ»**. Շուկայի մասնակիցներին պատկանող դրամային հաշիվներ, որոնցից միայն կարող է իրականացվել վարկային ռեսուրսների նախնական և լրացուցիչ դեպոնացումները, ինչպես նաև ստացված վարկերի մարման նպատակով Բորսայի առևտրային հաշիվներին միջոցների դեպոնացումը, և որոնց վրա կարող են փոխանցվել միջոցները վարկային ռեսուրսների ապադեպոնացման, ինչպես նաև Շուկայում կնքված գործարքների վերջնահաշվարկի և մարման ժամանակ:
- 4) **«Սահմանաչափ»**. Ժամկետային վարկային ռեսուրսների հարթակի մասնակցին սույն կանոններին համապատասխան տրվող՝ ժամկետային վարկային ռեսուրսների ներգրավման սահմանաչափ, որը հաշվարկվում է Դեպոզիտարիայի կողմից:
- 5) **«Հաշվարկային բանկ»**. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:
- 6) **«Հանձնարարական»**. դրամային միջոցների վճարման հանձնարարական:
- 7) **«Օպերատոր»**. «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱԷ Բաց Բաժնետիրական Ընկերություն»:
- 8) **«Քլիրինգ»**. Շուկայում կնքված գործարքների արդյունքում ծագած՝ փոխադարձ պարտավորությունների որոշում և հաշվանցում (գործարքների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, խմբավորում, ինչպես նաև վերջնահաշվարկի համար Շուկայի մասնակիցների դիրքերի հաշվարկում և վճարահաշվարկային փաստաթղթերի պատրաստում):
- 9) **«Բազմակողմանի-անընդհատ քլիրինգ»**. քլիրինգի իրականացման եղանակ, որի դեպքում միևնույն առևտրային օրվա մեկ կամ ավելի առևտրային և հետառևտրային նստաշրջանների ընթացքում կնքված յուրաքանչյուր գործարքից հետո Օպերատորը որոշում է կնքված գործարքների կատարման հետ կապված՝ Շուկայի մասնակիցների զուտ պարտավորությունները և/կամ պահանջները:
- 10) **«Ձուտացում»**. միևնույն առևտրային օրվա մեկ կամ ավելի առևտրային և հետառևտրային նստաշրջանների ընթացքում կնքված գործարքներից բխող պահանջների և պարտավորությունների հաշվանցման հետ կապված Շուկայի մասնակցի զուտ պարտավորությունների և/կամ պահանջների որոշման գործընթաց, որի արդյունքում Շուկայի յուրաքանչյուր մասնակցի մոտ կարող է առաջանալ միայն մեկ զուտ դրամային պահանջ կամ զուտ դրամային պարտավորություն:

- 11) «**Օպերատորի դրամային առևտրային հաշիվ**». Հաշվարկային բանկում Օպերատորի անունով բացված հաշիվ, որը կիրառվում է տվյալ առևտրային օրվա ընթացքում Շուկայի մասնակիցների կողմից արտարժույթով, պետական պարտատոմսերով և ժամկետային վարկային ռեսուրսներով Օպերատորի կողմից կազմակերպվող առևտրի ընթացքում գործարքներ կնքելու համար նախատեսված՝ ՀՀ դրամով արտահայտված (դրամային) միջոցների փոխանցման, հաշվառման և քլիրինգի արդյունքների հիման վրա Շուկայի մասնակիցների դրամային պարտավորությունների կատարման ապահովման համար:
- 12) «**Վերջնահաշվարկ**». գործողությունների ամբողջություն, որի արդյունքում մարվում են Օպերատորի առևտրային հաշվիներին միջոցների դեպոնացման, առևտրի ընթացքում դրանց ապադեպոնացման, գործարքների կնքման և մարման կապակցությամբ Շուկայի մասնակիցների մոտ զուտացման արդյունքում առաջացած՝ դրամային միջոցների փոխանցման և ստացման հետ կապված զուտ պարտավորությունները և պահանջները:
- 13) «**Գործարքի մարում**». Վերջնահաշվարկի ընթացքում կատարվող գործողությունների ամբողջություն, որի արդյունքում սույն կանոններով, Օպերատորի և Դեպոզիտարիայի միջև կնքված պայմանագրով և Դեպոզիտարիայի կանոններով սահմանված կարգով ապահովվում է ժամկետային վարկերի գծով զուտ վարկառուների կողմից ստացված վարկերի և դրանց վրա հաշվեգրված տոկոսագումարների փոխանցումը զուտ վարկատուների իրավասու հաշիվներին:
- 14) Սույն կանոններում կիրառվող այլ հասկացություններն ունեն Օպերատորի առևտրի կանոններով սահմանված նշանակությունները:

Գլուխ 2. Քլիրինգի և վերջնահաշվարկի իրականացման եղանակները, կիրառվող հաշիվները

- 1) Շուկայում կնքված գործարքների կատարման հետ կապված փոխադարձ պարտավորությունները Օպերատորը որոշում և հաշվանցում է զուտացման միջոցով՝ բազմակողմանի-անընդհատ քլիրինգի եղանակով:
- 2) Շուկայում կնքված գործարքների վերջնահաշվարկն իրականացնում է Հաշվարկային բանկը:
- 3) Ժամկետային վարկային ռեսուրսների նախնական դեպոնացումը, առևտրային նստաշրջանի ընթացքում դրանց լրացուցիչ դեպոնացումը, ապադեպոնացումը, ինչպես նաև Շուկայում կնքված գործարքների վերջնահաշվարկն ու մարումն իրականացվում է միայն Շուկայի մասնակիցների իրավասու հաշիվներով: Իրավասու հաշիվներ կարող են լինել Հաշվարկային բանկում վարվող դրամային հաշիվները, ընդ որում՝ իրավասու հաշիվը համարվում է Հաշվարկային բանկում վարվող, եթե՝
 - ա) տվյալ իրավասու հաշիվը փաստացի վարվում է Հաշվարկային բանկում, կամ

բ) տվյալ իրավասու հաշիվը Հաշվարկային բանկում փաստացի վարվող հաշվի արտացոլումն է Շուկայի մասնակցի ներքին հաշվառման համակարգում:

- 4) Շուկայի մասնակիցները պարտավոր են Օպերատորին ներկայացնել տեղեկություններ սույն գլխի 3) կետում նշված իրենց իրավասու հաշիվների մասին: Շուկայի մասնակիցը կարող է ունենալ մեկ իրավասու հաշիվ, որը կարող է փոփոխվել այդ մասին Օպերատորին առնվազն մեկ օր առաջ գրավոր տեղեկացնելով: Շուկայի մասնակցի կողմից թղթային եղանակով Հաշվարկային բանկ Հանձնարարականների ներկայացման դեպքում Օպերատորի կողմից որպես իրավասու հաշիվ է դիտվում Հաշվարկային բանկում փաստացի վարվող՝ Շուկայի տվյալ մասնակցի հաշիվը, որի դեպքում փոխանցված միջոցները սույն կանոններով սահմանված կարգով օգտագործվում են առևտրային համակարգում Շուկայի տվյալ մասնակցի միջոցները համալրելու նպատակով:
- 5) Շուկայի մասնակիցը պարտավոր է իր իրավասու հաշվի (հաշվի փոփոխության) մասին Օպերատորին տեղեկացման հետ միաժամանակ Օպերատորին ներկայացնել նաև իր գրավոր համաձայնությունը (երկու բնօրինակ) սույն կանոնների 7-րդ գլխի 10) և 11) կետերում, ինչպես նաև և սույն կանոնների 8-րդ գլխի 2) կետում նշված դեպքում և չափով՝ Հաշվարկային բանկում վարվող իր դրամային հաշվից համապատասխան միջոցների գանձման իրավունքը Օպերատորին վերապահելու մասին՝ նշելով համապատասխան հաշվեհամարը, որի մեկ օրինակը Օպերատորը ներկայացնում է Հաշվարկային բանկին:

Գլուխ 3. Վարկային ռեսուրսների նախնական դեպոնացումը և սահմանաչափերի տրամադրումը

- 1) Շուկայում կնքվող գործարքների վերջնահաշվարկի կատարման ապահովման նպատակով Շուկայի մասնակիցները մինչև առևտրային նստաշրջանի սկիզբը իրենց իրավասու հաշիվներից Օպերատորի դրամային առևտրային հաշվին են փոխանցում (դեպոնացնում) առևտրի համար նախատեսված վարկային ռեսուրսները:
- 2) Դրամային միջոցների փոխանցումը Օպերատորի դրամային առևտրային հաշվին իրականացվում է Հաշվարկային բանկ ներկայացված համապատասխան Հանձնարարականների հիման վրա: Հանձնարարականները ներկայացվում են էլեկտրոնային եղանակով, իսկ էլեկտրոնային եղանակով ներկայացման անհնարինության դեպքում՝ թղթային եղանակով: Էլեկտրոնային եղանակով ՀՀ դրամի վճարման հանձնարարականները ներկայացվում են «ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի» ՀՏ 202 կամ ՀՏ 100 հաղորդագրության միջոցով:
- 3) Էլեկտրոնային Հանձնարարականները պետք է Հաշվարկային բանկ ներկայացվեն առևտրային նստաշրջանի սկսվելուց առնվազն 45 (քառասունհինգ) րոպե առաջ, որոնց կատարման դեպքում կատարումը հաստատող համապատասխան ՀՏ 202 կամ ՀՏ 100 հաղորդագրություններն էլեկտրոնային եղանակով անմիջապես ուղարկվում են

Օպերատորին: Դրանից հետո Հաշվարկային բանկ ներկայացված էլեկտրոնային Հանձնարարականների կատարումը մինչև սույն գլխի 5) կետում նշված ժամկետը Հաշվարկային բանկը չի երաշխավորում:

- 4) Թղթային Հանձնարարականները պետք է Հաշվարկային բանկ ներկայացվեն առևտրային նստաշրջանի սկսվելուց առնվազն մեկ ժամ առաջ, որոնց կատարման դեպքում կատարումը հաստատող համապատասխան ՀՏ 202 կամ ՀՏ 100 հաղորդագրություններն ավտոմատ եղանակով անմիջապես ուղարկվում են Օպերատորին: Դրանից հետո Հաշվարկային բանկ ներկայացված թղթային Հանձնարարականների կատարումը մինչև սույն գլխի 5) կետում նշված ժամկետը Հաշվարկային բանկը չի երաշխավորում:
- 5) Հաշվարկային բանկը պետք է ապահովի Հանձնարարականների կատարումը հաստատող հաղորդագրությունների ներկայացումը Օպերատորին առևտրային նստաշրջանի սկսվելուց առնվազն 15 (տասնհինգ) րոպե առաջ, եթե հանձնարարականը ներկայացվել է սույն գլխի 3) և/կամ 4) կետերով սահմանված ժամկետներում:
- 6) Հաշվարկային բանկ Հանձնարարականի ներկայացման պահ է համարվում՝
 - ա) թղթային եղանակով ներկայացված Հանձնարարականի դեպքում՝ Հաշվարկային բանկի լիազորված աշխատակցին Հանձնարարականի հանձնման պահը,
 - բ) էլեկտրոնային եղանակով ներկայացված Հանձնարարականի դեպքում՝ «ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի» կողմից առաքումը հաստատող դրական անդորրագրի ձևակերպման ժամանակը:
- 7) Օպերատորին Հանձնարարականների կատարումը հաստատող հաղորդագրությունների ներկայացման պահ է համարվում «ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի» կողմից առաքումը հաստատող դրական անդորրագրի ձևակերպման ժամանակը:
- 8) Եթե Հաշվարկային բանկում տեխնիկական վթարի հետևանքով անհնար է ապահովել էլեկտրոնային եղանակով ներկայացվող Հանձնարարականների ընդունումը մինչև սույն գլխի 3) կետում սահմանված ժամը, ապա Հաշվարկային բանկը, ոչ ուշ քան առևտրային նստաշրջանի սկսվելուց 30 (երեսուն) րոպե առաջ այդ մասին հեռախոսով և ՍԻԲԻԷՆԵԹ համակարգչային ցանցով տեղեկացնում է Օպերատորին: Օպերատորը «Առևտրի ընդհանուր կանոններին» համապատասխան որոշում է ընդունում առևտրային նստաշրջանի սկիզբը հետաձգելու վերաբերյալ և ՍԻԲԻԷՆԵԹ համակարգչային ցանցով կամ հեռախոսով տեղեկացնում է այդ մասին Շուկայի մասնակիցներին: Շուկայի այն մասնակիցները, որոնց էլեկտրոնային Հանձնարարականները չեն ստացվել Հաշվարկային բանկի կողմից, կարող են Հաշվարկային բանկ ներկայացնել թղթային Հանձնարարականներ՝ նշելով վերջիններիս վրա «կրկնօրինակ», ինչը կբացառի միջոցների կրկնակի փոխանցումը Օպերատորի դրամային առևտրային հաշվին:

- 9) Եթե տեխնիկական վթարի հետևանքով անհնար է Հանձնարարականների կատարումը հաստատող հաղորդագրությունների էլեկտրոնային եղանակով ստացումը Օպերատորի կողմից, ապա դրանք Օպերատորը Հաշվարկային բանկից ստանում է էլեկտրոնային կրիչով և, անհրաժեշտության դեպքում, որոշում է ընդունում առևտրային նստաշրջանի սկիզբը հետաձգելու վերաբերյալ:
- 10) Եթե Շուկայում առկա տեխնիկական խնդիրների կամ այլ պատճառների հետևանքով որոշում է ընդունվում առևտրային նստաշրջանի սկիզբը հետաձգելու վերաբերյալ, ապա Օպերատորը այդ մասին հեռախոսով և ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով տեղեկացնում է Շուկայի մասնակիցներին և Հաշվարկային բանկին:
- 11) Սույն գլխի 8), 9) և 10) կետերով սահմանված դեպքերում առևտրային նստաշրջանի սկզբի հետաձգման ժամկետով հետաձգվում են նաև մինչև առևտրային նստաշրջանի սկիզբը ներկայացվող և սույն գլխի 3), 4) և 5) կետերում սահմանված՝ Հանձնարարականների և Հանձնարարականների կատարումը հաստատող հաղորդագրությունների ներկայացման ժամկետները:
- 12) Հաշվարկային բանկից առևտրային նստաշրջանի սկսվելուց առնվազն 15 (տասնհինգ) րոպե առաջ ստացված՝ Հանձնարարականների կատարումը հաստատող համապատասխան էլեկտրոնային հաղորդագրությունների հիման վրա Օպերատորի առևտրային համակարգում առևտրային նստաշրջանի բացման դրությամբ Օպերատորը ձևավորում է Շուկայի մասնակիցների՝ վարկային ռեսուրսների սկզբնական մնացորդները: Սույն կետով սահմանված ժամկետից հետո, բայց ոչ ուշ, քան մինչև սույն կանոնների 4-րդ գլխի 2) կետով սահմանված ժամկետը ստացված՝ Հանձնարարականների կատարումը հաստատող էլեկտրոնային հաղորդագրությունները հաշվի չեն առնվում միջոցների սկզբնական մնացորդների ձևավորման ժամանակ, սակայն հաշվի առնվում են սույն կանոնների 4-րդ գլխին համապատասխան Օպերատորի առևտրային համակարգում Շուկայի մասնակիցների վարկային ռեսուրսների մնացորդների ավելացման ժամանակ:
- 13) Եթե Օպերատորի դրամային առևտրային հաշվին միջոցներ են փոխանցվել ոչ իրավասու հաշիվներից կամ սույն գլխով չսահմանված Հանձնարարականների միջոցով, ապա Օպերատորը նույն առևտրային օրվա ընթացքում պատրաստում և Հաշվարկային բանկ է ներկայացնում համապատասխան էլեկտրոնային Հանձնարարականներ ստացված միջոցները նույն հաշիվներին հետ փոխանցելու նպատակով:
- 14) Օպերատորի և Դեպոզիտարիայի միջև կնքված պայմանագրով և Դեպոզիտարիայի կանոններով սահմանված կարգով Դեպոզիտարիայի կողմից շուկայի մասնակիցներին տրամադրվում են ժամկետային վարկային ռեսուրսների ներգրավման նախնական սահմանաչափեր, որոնց վերաբերյալ տվյալները ժամը 9:30-ի և 10:30-ի դրությամբ Օպերատորի և Դեպոզիտարիայի միջև կնքված պայմանագրով սահմանված կարգով Դեպոզիտարիայից ստացվում են համապատասխանաբար մինչև ժամը 9:45 և 10:45-ը:

- 15) Սահմանաչափերի վերաբերյալ տվյալների ստացման պահից 10 րոպեի ընթացքում Օպերատորը շուկայի յուրաքանչյուր մասնակցի սահմանաչափերի վերաբերյալ տեղեկություններն ուղարկում է վերջիններիս՝ ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցի իրավասու էլեկտրոնային հասցեներին:
- 16) Մինչև ժամը 10:45-ը Դեպոզիտարիայից ստացվում են նաև տվյալ օրը մարվող ժամկետային վարկերի մայր գումարների և տոկոսագումարների մասով շուկայի մասնակիցների գուտ դիրքերի և դրանց վերաֆինանսավորման նպատակով լրացուցիչ սահմանաչափի տրամադրման մասին տվյալները, որի հիման վրա գուտ բացասական դիրքի չափով Օպերատորը նվազեցնում է շուկայի համապատասխան մասնակիցների՝ սեփական դրամային միջոցների դիրքը, որի արդյունքում շուկայի տվյալ մասնակցի սեփական դրամային միջոցների դիրքը կարող է ստանալ նաև բացասական արժեք՝ միաժամանակ լրացուցիչ սահմանաչափով ավելացնելով շուկայի տվյալ մասնակցի՝ ժամկետային վարկային ռեսուրսների ներգրավման նախնական սահմանաչափը: Քանի դեռ արտարժույթի, պետական պարտատոմսերի և ժամկետային վարկային ռեսուրսների հարթակում շուկայի մասնակցի դրամային դիրքը բացասական է, նրան այդ հարթակներում թույլատրվում է միայն արտարժույթի և/կամ պետական ասարտատոմսերի վաճառքի և ժամկետային վարկային ռեսուրսների գնման հայտեր ներկայացնել և գործարքներ կնքել: Առևտրի ընթացքում շուկայի մասնակցի բացասական դիրքը չի կարող ավելանալ, իսկ լրացուցիչ դեպոզիտացումների կամ կատարված գործարքների արդյունքում դրականի վերափոխված, կամ ի սկզբանե դրական դիրքը առևտրի ընթացքում չի կարող նվազել զրոյից:
- 17) Սույն գլխի 14) կետում նշված նախնական սահմանաչափերի հաշվարկման նպատակով Օպերատորը Դեպոզիտարիային է տրամադրում ժամկետային վարկային ռեսուրսների հարթակի երաշխիքային հիմնադրամում հաշվառվող պետական պարտատոմսերի նկատմամբ կիրառվող զեղչման գործակիցները (այսուհետ՝ Ջեղչման գործակիցներ) և շուկայի մասնակիցների կողմից ներգրավվող ժամկետային վարկերի գումարային առավելագույն թույլատրելի չափերը (այսուհետ՝ Առավելագույն սահմանաչափ), որոնք սահմանվում են Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ:
- 18) Օպերատորը պարտավոր է սույն գլխի 17) կետում նշված որոշումն այն կայացնելուց հետո անմիջապես ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով ուղարկել ՀՀ կենտրոնական բանկի իրավասու աշխատակցին: Մինչև հաջորդ աշխատանքային օրը ՀՀ կենտրոնական բանկից ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով առարկություն չստանալու կամ չառարկելու մասին գրավոր տեղեկացում ստանալու դեպքում Օպերատորը ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով որոշման մասին տեղեկացնում է ժամկետային վարկային ռեսուրսների շուկայի մասնակիցներին և Դեպոզիտարիային, որի դեպքում որոշումն ուժի մեջ է մտնում տեղեկացնելու օրվան հաջորդող 14-րդ օրը, եթե առանձին դեպքերում որոշմամբ դրա ուժի մեջ մտնելու այլ ժամկետ սահմանված չէ: Որոշման ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած է ճանաչվում ժամկետային վարկային ռեսուրսների հարթակի երաշխիքային հիմնադրամում հաշվառվող պետական պարտատոմսերի նկատմամբ կիրառվող զեղչման գործակիցների և շուկայի

մասնակիցների կողմից ներգրավվող ժամկետային վարկերի գումարային առավելագույն թույլատրելի չափերի վերաբերյալ սույն գլխին համապատասխան կայացված նախորդ որոշումը:

- 19) Շուկայի մասնակիցների՝ ժամկետային վարկային ռեսուրսների ներգրավման սահմանաչափի և դրամային նախնական դիրքերի մասին տվյալները մինչև ժամը 11:00-ը մուտքագրվում են առևտրային համակարգ:

Գլուխ 4. Առևտրային նստաշրջանի ընթացքում վարկային ռեսուրսների լրացուցիչ դեպոնացումը և ապադեպոնացումը

- 1) Շուկայի մասնակիցները կարող են կատարել դրամային միջոցների լրացուցիչ դեպոնացումներ՝ սույն կանոնների 3-րդ գլխով սահմանված ընթացակարգերին համապատասխան Օպերատորի դրամային առևտրային հաշվին փոխանցելով համապատասխան միջոցներ:
- 2) Օպերատորի դրամային առևտրային հաշվին լրացուցիչ դեպոնացված միջոցների վերաբերյալ Հաշվարկային բանկից ստացված՝ Հանձնարարականների կատարումը հաստատող համապատասխան էլեկտրոնային հաղորդագրությունները հիմք են առևտրային համակարգում Շուկայի մասնակիցների դրամային միջոցների մնացորդների ավելացման համար: Հաշվարկային բանկից մինչև ժամը 11:20-ը և 12:50-ը ստացված հաստատումների հիման վրա առևտրային համակարգում Օպերատորը համապատասխանաբար ժամը 11:30-ին և 13:00-ին ավելացնում է Շուկայի մասնակիցների՝ դրամային միջոցների մնացորդները:
- 3) Հաշվարկային բանկը մերժում է ժամը 15:30-ից հետո Շուկայի մասնակիցների կողմից ներկայացված Հանձնարարականները: Օպերատորը մինչև ժամը 16:00-ը զրոյացնում է իր դրամային առևտրային հաշիվը:
- 4) Շուկայի մասնակիցների կողմից լրացուցիչ դեպոնացման համար Օպերատորի դրամային առևտրային հաշվին փոխանցված միջոցները, որոնց համապատասխան Հանձնարարականների կատարումը հաստատող էլեկտրոնային հաղորդագրությունները Օպերատորը ստացել է ժամը 12:50-ից հետո մինչև 15:05-ը, հաշվին են առնվում Շուկայի տվյալ մասնակցի վերջնական դիրքի հաշվարկման ժամանակ սույն կանոնների 6-րդ գլխի 3) կետով սահմանված կարգով: Ժամը 15:05-ից հետո ստացված դրամային միջոցները Շուկայի մասնակիցներին հետ են փոխանցվում Օպերատորի դրամային առևտրային հաշվի զրոյացման ժամանակ:
- 5) Եթե Օպերատորի դրամային առևտրային հաշվին լրացուցիչ դեպոնացման համար սահմանված ժամանակահատվածում միջոցներ են փոխանցվել ոչ իրավասու հաշիվներից կամ սույն կանոններով չսահմանված Հանձնարարականների միջոցով, ապա Օպերատորը նույն առևտրային օրվա ընթացքում պատրաստում և Հաշվարկային բանկ է ներկայացնում համապատասխան էլեկտրոնային Հանձնարարականներ ստացված միջոցները նույն հաշիվներին հետ փոխանցելու նպատակով:

- 6) Օպերատորը ժամը 11:30-ին և 12:30-ին ստուգում է Օպերատորի «Ժամկետային վարկային ռեսուրսների առևտրի կանոններին» համապատասխան առևտրի որևէ մասնակցի կողմից առևտրային համակարգում Շուկայի տվյալ մասնակցի առկա դրամային միջոցների (դրանց մի մասի) ապադեպոնացում կատարելու փաստը:
- 7) Ստուգման արդյունքում եթե պարզվում է, որ առևտրի որևէ մասնակցի կողմից ստուգմանը նախորդող ժամանակահատվածի (11:00-ից 11:30-ը, 11:30-ից 12:30-ը) ընթացքում կատարվել է դրամային միջոցների ապադեպոնացում, ապա Օպերատորը 15 (տասնհինգ) րոպեի ընթացքում պատրաստում և իր տարածքում գտնվող տերմինալից ուղարկում է էլեկտրոնային Հանձնարարականներ՝ Օպերատորի դրամային առևտրային հաշվից Շուկայի համապատասխան մասնակիցների իրավասու հաշիվներին համապատասխան միջոցների փոխանցման նպատակով: Օպերատորի տարածքում գտնվող տերմինալից էլեկտրոնային եղանակով Հանձնարարականների ներկայացման անհնարինության դեպքում դրանք 45 րոպեի ընթացքում էլեկտրոնային եղանակով ներկայացվում են Հաշվարկային բանկում Օպերատորին հատկացված պահուստային տերմինալից՝ այդ մասին ՍԻԲԻԷՆԵթ համակարգչային ցանցով, հեռախոսով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով տեղեկացնելով Շուկայի մասնակիցներին: Պահուստային տերմինալից էլեկտրոնային եղանակով Հանձնարարականները ներկայացնելու անհնարինության դեպքում դրանք ներկայացվում են թղթային եղանակով՝ այդ մասին ՍԻԲԻԷՆԵթ համակարգչային ցանցով, հեռախոսով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով տեղեկացնելով Շուկայի մասնակիցներին և Հաշվարկային բանկին: Առևտրի մասնակիցների կողմից ժամը 12:30-ից հետո ապադեպոնացված դրամային միջոցների հետ կապված հետագա գործողությունները սահմանվում են Օպերատորի «Արտարժույթի քլիրինգի և վերջնահաշվարկի կանոններով» և «Պետական պարտատոմսերի քլիրինգի և վերջնահաշվարկի կանոններով»:
- 8) Հաշվարկային բանկում սույն գլխի 7) կետերով սահմանված Հանձնարարականները կատարվում են, որի արդյունքում ապահովվում է դրանցում նշված միջոցների փոխանցումը Հաշվարկային բանկում վարվող՝ Շուկայի համապատասխան մասնակցի(ների) իրավասու հաշիվներին:
- 9) Օպերատորը ժամը 11:30-ին, 12:30-ին, 14:00-ին և 15:10-ին ստուգում է Օպերատորի «Ժամկետային վարկային ռեսուրսների առևտրի կանոններին» համապատասխան առևտրի որևէ մասնակցի կողմից առևտրային համակարգում Շուկայի տվյալ մասնակցի վարկային սահմանաչափի (դրա մի մասի) ազատելու փաստը: Ստուգման արդյունքում եթե պարզվում է, որ առևտրի որևէ մասնակցի կողմից ստուգմանը նախորդող ժամանակահատվածի (11:00-ից 11:30-ը, 11:30-ից 12:30-ը, 12:30-ից 14:00-ը, 14:00-ից 15:10-ը) ընթացքում կատարվել է սահմանաչափի չօգտագործված մնացորդի (դրա մի մասի) ազատում, ապա Օպերատորը դրա վերաբերյալ տվյալները հաջորդ 5 րոպեների ընթացքում Դեպոզիտարիայի հետ կնքված պայմանագրին համապատասխան տրամադրում է Դեպոզիտարիային:

Գլուխ 5. Քլիրինգ

- 1) Ժամկետային վարկային ռեսուրսների հետառևտրային նստաշրջանի ավարտից հետո Օպերատորը հավաքագրում և խմբավորում է առևտրի մասնակիցների կողմից կնքված գործարքների, Օպերատորի դրամային առևտրային հաշվին փոխանցված միջոցների, կատարված ապադեպոնացումների վերաբերյալ տվյալները, և հաշվարկում է Շուկայի մասնակիցների դրամային դիրքերը՝ ժամկետային վարկային ռեսուրսների հետառևտրային նստաշրջանի փակման պահի դրությամբ:
- 2) Շուկայի մասնակիցների դիրքերը հաշվարկելու նպատակով Օպերատորն իրականացնում է առևտրային և հետառևտրային նստաշրջանների ընթացքում կնքված գործարքներից բխող պահանջների և պարտավորությունների զուտացում, որի արդյունքում գործարքների կատարման օրվա համար ըստ Շուկայի յուրաքանչյուր մասնակցի Օպերատորը որոշում է մեկական զուտ դրամային պահանջ կամ զուտ դրամային պարտավորություն:
- 3) Դրամային զուտ պարտավորությունը ցույց է տալիս, թե Շուկայի մասնակիցը դրամային միջոցների ինչ գումար պետք է փոխանցի, իսկ զուտ պահանջը՝ թե դրամային միջոցների ինչ գումար պետք է ստանա:
- 4) Եթե Շուկայի մասնակիցը Օպերատորի կանոններին համապատասխան միաժամանակ մասնակցում է ժամկետային վարկային ռեսուրսների, ինչպես նաև Օպերատորի կողմից նախնական դեպոնացմամբ կազմակերպվող պետական պարտատոմսերի և/կամ արտարժույթի առևտրին, ապա սույն գլխի 2) կետով սահմանված կարգով զուտ դրամային պահանջները և պարտավորությունները որոշելիս Օպերատորը համախմբում է Շուկայի տվյալ մասնակցի կողմից ժամկետային վարկային ռեսուրսների, ինչպես նաև նախնական դեպոնացմամբ կազմակերպվող պետական պարտատոմսերի և/կամ արտարժույթի առևտրի ընթացքում կնքված գործարքների մասին տվյալները:
- 5) Ժամկետային վարկային ռեսուրսների հետառևտրային նստաշրջանի փակման պահին դրամային բացասական դիրք ունենալու դեպքում Օպերատորը Շուկայի մասնակցին ՍիԲիԷլՆեթ համակարգչային ցանցով անմիջապես հաղորդագրություն է ուղարկում՝ մինչև ժամը 15:05-ը բացասական դիրքը առնվազն զրոյացնելու պահանջով, որի դեպքում շուկայի մասնակիցը պարտավոր է՝
 - ա) մինչև սահմանված ժամը արտարժույթի և/կամ պետական պարտատոմսերի հարթակներում համապատասխան ֆինանսական գործիքների վաճառքի արդյունքում ավելացնել դրամային դիրքը, և/կամ
 - բ) մինչև սահմանված ժամը համապատասխան դրամային միջոցներ փոխանցել Օպերատորի դրամային առևտրային հաշվին, և/կամ
 - գ) Դեպոզիտարիայի կանոններով սահմանված կարգով և ժամկետներում ապահովել շուկայի տվյալ մասնակցի՝ երաշխիքային հիմնադրամում հաշվառվող պետական պարտատոմսերը դրամային միջոցներով փոխարինելու հանձնարարականների

ներկայացումը Դեպոզիտարիային, որի դեպքում Դեպոզիտարիան կատարված հանձնարարականների հիման վրա ստացված դրամային միջոցները ՀՏ 100 հաղորդագրությամբ փոխանցում է Օպերատորին՝ հանձնարարականի նպատակը դաշտում նշելով շուկայի այն մասնակցի առևտրային կողմ, որի պարտավորությունների կատարմանը պետք է ուղղվեն փոխանցվող դրամային միջոցները:

6) Ժամկետային վարկային ռեսուրսների հարթակում կնքված գործարքների մարման օրվա քլիրինգի իրականացման նպատակով Օպերատորն առևտրայի օրվա մինչև ժամը 15:15-ը իր և Դեպոզիտարիայի միջև կնքված պայմանագրով սահմանված կարգով Դեպոզիտարիային է փոխանցում առևտրային համակարգում առկա՝ ժամկետային վարկային ռեսուրսների ներգրավման սահմանաչափերը, ինչպես նաև Շուկայի մասնակիցների կողմից ժամկետային վարկային ռեսուրսներով կնքված գործարքների վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝

ա) ժամկետային վարկային ռեսուրսի հապավումը, որում նշում է պարունակում վարկի ժամկետայնության (օրացուցային օրերով) մասին,

բ) գործարքի գինը,

գ) գործարքի լուտերի քանակը,

դ) գործարքի կնքման ամսաթիվը,

ե) գործարքի տեսակը (առք կամ վաճառք),

զ) գործարքի ընդհանուր գումարը,

է) գործարքի կողմերը:

Գլուխ 6. Միջոցների համեմատումը և վճարահաշվարկային փաստաթղթերի պատրաստումը

1) Շուկայի յուրաքանչյուր մասնակցի դրամային միջոցների գծով զուտ պահանջները և պարտավորությունները որոշելուց հետո Օպերատորը Շուկայի մասնակիցների զուտ պարտավորությունների կատարումը ստուգելու նպատակով համեմատում է իր հաշիվներին փոխանցված միջոցները Շուկայում կնքված գործարքների արդյունքում Շուկայի մասնակիցների կողմից ստանձնած զուտ պարտավորությունների հետ:

2) Շուկայի մասնակիցների իրավասու հաշիվներին վերջնահաշվարկի ժամանակ Օպերատորի առևտրային հաշվից փոխանցման ենթակա դրամային միջոցների գումարը հավասար է հետևյալ միջոցների հանրագումարին՝

ա) արտարժույթի հետառևտրային նստաշրջանի փակման պահին առևտրային համակարգում շուկայի տվյալ մասնակցի՝ արտարժույթի, պետական

պարտատոմսերի և ժամկետային վարկային ռեսուրսների հարթակներում դրամային դիրքի մնացորդ,

- բ) շուկայի տվյալ մասնակցի կողմից Օպերատորի դրամային առևտրային հաշվին փոխանցված, սակայն առևտրային համակարգ չնուտքագրված դրամային միջոցներ,
 - գ) շուկայի տվյալ մասնակցի՝ ժամկետային վարկերի մայր գումարների և տոկոսագումարների մասով զուտ դրական (ստացվելիք) դրամային դիրք, որի վերաբերյալ տվյալները տվյալ առևտրային օրվա մինչև ժամը 10:45-ը ստացվում են Դեպոզիտարիայից՝ Օպերատորի և Դեպոզիտարիայի միջև կնքված պայմանագրով սահմանված կարգով:
- 3) Եթե սույն գլխի 2) կետին համապատասխան ստացված արդյունքը բացասական է, ապա ժամկետային վարկային ռեսուրսներով կնքված գործարքների վերջնահաշվարկը և մարումը կատարվում է սույն կանոնների 8-րդ գլխով նախատեսված ընթացակարգով, իսկ եթե բացասական չէ՝ սույն կանոնների 7-րդ գլխով նախատեսված ընթացակարգով:

Գլուխ 7. Վերջնահաշվարկ

- 1) Վճարահաշվարկային փաստաթղթերի պատրաստումից, միջոցների համեմատման արդյունքում անհամապատասխանություններ չհայտնաբերելուց կամ բացահայտված անհամապատասխանության վերացումից հետո Օպերատորը մինչև ժամը 15:30-ը համապատասխան միջոցների ՀՏ 100 կամ ՀՏ 202 վճարման հանձնարարականներ է ներկայացում Հաշվարկային բանկին, որոնք ապահովում են ինչպես արտարժույթով, պետական պարտատոմսերով և ժամկետային վարկային ռեսուրսներով տվյալ առևտրային օրվա ընթացքում կնքված գործարքների կատարման հետ կապված դրամային միջոցների մասով վերջնահաշվարկը, այնպես էլ ժամկետային վարկային ռեսուրսներով կնքված գործարքների մարման հետ կապված վերջնահաշվարկը:
- 2) Օպերատորը իր տարածքում գտնվող տերմինալից սույն գլխի 1) կետում նշված հանձնարարականները Հաշվարկային բանկ է ներկայացնում ոչ ուշ, քան գործարքների կնքման օրվա ժամը 15:30-ը:
- 3) Հաշվարկային բանկում սույն գլխի 2) կետում նշված Հանձնարարականներն ավտոմատ եղանակով կատարվում են, որի արդյունքում իրականացվում են դրանցում նշված միջոցների փոխանցումները Հաշվարկային բանկում վարվող՝ Շուկայի մասնակիցների իրավասու հաշիվներին՝ միաժամանակ վերջիններիս փոխանցելով Հանձնարարականների կատարումը հաստատող էլեկտրոնային հաղորդագրությունները:
- 4) Շուկայի մասնակիցները ստուգում են վերջնահաշվարկի ընթացքում իրենց իրավասու հաշիվների վրա փոխանցված միջոցների համապատասխանությունը Օպերատորից ստացված գործարքների գրանցման վկայականների և առևտրային համակարգում արտացոլված տվյալների հետ:

- 5) Որևէ անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում Շուկայի մասնակիցները մինչև ժամը 16:30-ը այդ մասին հեռախոսով հայտնում են Հաշվարկային բանկին և Օպերատորին: Հնարավորության դեպքում Հաշվարկային բանկին տեղեկացումն ուղարկվում է նաև էլեկտրոնային եղանակով՝ ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով: Միաժամանակ Օպերատորը անհամապատասխանություն հայտնաբերած Շուկայի մասնակցի հետ միասին ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցներն անհամապատասխանությունների պատճառները հայտնաբերելու և սույն կանոններով սահմանված կարգով վերացնելու ուղղությամբ՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով նաև Շուկայի այլ մասնակիցներին:
- 6) Եթե Օպերատորի կողմից կատարված ստուգումների արդյունքում պարզվում է, որ Շուկայի մասնակցի կողմից անհամապատասխանության վերաբերյալ արված ահազանգն անհիմն է, ապա Օպերատորը այդ մասին հեռախոսով տեղեկացնում է Հաշվարկային բանկին:
- 7) Եթե Օպերատորի կողմից կատարված ստուգումների արդյունքում պարզվում է, որ անհամապատասխանությունների վերաբերյալ ահազանգը հիմնավոր է կամ առկա է կասկած, որ այն կարող է լինել հիմնավոր, ապա Օպերատորը մինչև ժամը 17:00-ը հեռախոսով և ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով այդ մասին տեղեկացնում է Հաշվարկային բանկին՝ խնդրելով հետաձգել Հաշվարկային բանկի գործառնական օրվա փակումը, և Շուկայի մասնակիցների հետ համաձայնեցված ձևով ապահովում է ուղղումների կատարումը սույն գլխի 8) և 9) կետերին համապատասխան:
- 8) Շուկայի այն մասնակիցները, որոնց սխալմամբ ավել միջոցներ են փոխանցվել, պարտավոր են Օպերատորից սխալներն ուղղելու վերաբերյալ համապատասխան տեղեկացումը հեռախոսով և ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով ստանալուց հետո ոչ ուշ, քան 30 (երեսուն) րոպեի ընթացքում Օպերատորի համապատասխան առևտրային հաշվին հետ փոխանցել ավել ստացված միջոցները:
- 9) Օպերատորը պարտավոր է համապատասխան Հանձնարարականներ ներկայացնել Հաշվարկային բանկ՝ սույն գլխի 8) կետին համապատասխան ստացված միջոցները Շուկայի այն մասնակիցներին փոխանցելու նպատակով, որոնց սխալմամբ քիչ միջոցներ էին փոխանցվել:
- 10) Եթե Շուկայի մասնակիցը սույն գլխի 8) կետում նշված ժամկետում չի կատարում նույն կետով սահմանված իր պարտավորությունը, ապա Օպերատորը սույն գլխի 11) կետով սահմանված կարգով իրացնում է գանձման իր իրավունքը:
- 11) Սույն գլխի 10) կետով սահմանված դեպքում Օպերատորը Հաշվարկային բանկ է ներկայացնում պահանջագրեր սույն կանոնների 2-րդ գլխի 5) կետի համաձայն Օպերատորին գանձման իրավունք տվող գրավոր համաձայնություններում նշված համապատասխան հաշիվներից սույն գլխի 8) կետում նշված միջոցների գանձման և

Օպերատորի համապատասխան առևտրային հաշվին մուտքագրելու մասին՝ միաժամանակ Հաշվարկային բանկ համապատասխան Հանձնարարականներ ներկայացնելով նշված միջոցները Օպերատորի համապատասխան առևտրային հաշվից Շուկայի այն մասնակիցների իրավասու հաշիվներին փոխանցելու նպատակով, որոնց սխալմամբ քիչ միջոցներ էին փոխանցվել:

- 12) Սույն գլխի 8), 9) և 11) կետերին համապատասխան Շուկայի մասնակիցների և Օպերատորի կողմից համապատասխան Հանձնարարականները Հաշվարկային բանկ են ներկայացվում թղթային եղանակով:
- 13) Սույն գլխի 2) կետին համապատասխան Օպերատորի տարածքում գտնվող տերմինալից էլեկտրոնային եղանակով Հանձնարարականները ներկայացնելու անհնարինության դեպքում Օպերատորի կողմից մինչև ժամը 16:00-ը էլեկտրոնային եղանակով Հանձնարարականները ներկայացվում են Հաշվարկային բանկում Օպերատորին հատկացված պահուստային տերմինալից՝ այդ մասին ՍԻԲԻԷՆԵԹ համակարգչային ցանցով, հեռախոսով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով տեղեկացնելով Շուկայի մասնակիցներին և նշելով պատճառը:
- 14) Պահուստային տերմինալից էլեկտրոնային եղանակով Հանձնարարականները ներկայացնելու անհնարինության դեպքում Օպերատորը հեռախոսով և ՍԻԲԻԷՆԵԹ համակարգչային ցանցով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով դիմում է Հաշվարկային բանկին՝ խնդրելով հետաձգել Հաշվարկային բանկի գործառնական օրվա փակումը: Միաժամանակ մինչև ժամը 16:30-ը դրանք Օպերատորի կողմից ներկայացվում են թղթային եղանակով՝ այդ մասին ՍԻԲԻԷՆԵԹ համակարգչային ցանցով, հեռախոսով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով տեղեկացնելով Շուկայի մասնակիցներին և Հաշվարկային բանկին և նշելով պատճառը:

Գլուխ 8. Պարտավորությունների կատարման լրացուցիչ մեխանիզմներ

- 1) Եթե արտարժույթի հետառևտրային նստաշրջանի ավարտից հետո սույն կանոնների 6-րդ գլխի 2) կետին համապատասխան հաշվարկված՝ Օպերատորի առևտրային հաշվից փոխանցման ենթակա դրամային միջոցների գումարը շուկայի որևէ մասնակցի համար բացասական նշանակություն ունի, ապա Օպերատորը շուկայի համապատասխան մասնակցի և Հաշվարկային բանկի հետ հեռախոսով պարզում է չհամալրելու հանգամանքները, որից հետո մինչև ժամը 15:15-ը Հաշվարկային բանկին ՍԻԲԻԷՆԵԹ համակարգչային ցանցով ներկայացնում է պակասող գումարը շուկայի համապատասխան մասնակցի՝ Հաշվարկային բանկում վարվող դրամային հաշվից անակցեպտ գանձելու և Օպերատորի դրամային առևտրային հաշվին փոխանցելու պահանջագիր: Հաշվարկային բանկը հեռախոսով և ՍԻԲԻԷՆԵԹ համակարգչային ցանցով մինչև ժամը 15:30-ը տեղեկացնում է Օպերատորին պահանջագրի կատարման արդյունքների մասին:
- 2) Այն դեպքում, երբ սույն գլխի 1) կետում նշված պահանջագիրը կատարվում է դրանում նշված գումարով, ապա Օպերատորը մինչև 16:00-ը Հաշվարկային բանկ է

ներկայացնում վերջնահաշվարկի կատարման ՀՏ 100 կամ ՀՏ 202 վճարման հանձնարարականներ, որոնք ապահովում են ինչպես արտարժույթով, պետական պարտատոմսերով և ժամկետային վարկային ռեսուրսներով տվյալ առևտրային օրվա ընթացքում կնքված գործարքների կատարման հետ կապված դրամային միջոցների մասով վերջնահաշվարկն, այնպես էլ՝ ժամկետային վարկային ռեսուրսներով կնքված գործարքների մարման հետ կապված վերջնահաշվարկը:

- 3) Այն դեպքում, երբ սույն գլխի 1) կետում նշված՝ Հաշվարկային բանկում վարվող շուկայի մասնակցի հաշվում առկա դրամային միջոցների մնացորդը բավարար չէ պակասող գումարը համալրելու համար, ապա Հաշվարկային բանկն անակցեպտ գանձում է առկա գումարը, իսկ Օպերատորը մինչև 16:00-ն Հաշվարկային բանկ է ներկայացնում վերջնահաշվարկի կատարման ՀՏ 100 կամ ՀՏ 202 վճարման հանձնարարականներ, որոնք ապահովում են միայն արտարժույթով, պետական պարտատոմսերով և ժամկետային վարկային ռեսուրսներով տվյալ առևտրային օրվա ընթացքում կնքված գործարքների կատարման հետ կապված դրամային միջոցների մասով վերջնահաշվարկը: Միաժամանակ Օպերատորը մինչև ժամը 15:40-ը դիմում է Դեպոզիտարիային՝ վերջինիս կանոններին համապատասխան պակասող միջոցները զուտ դրական դիրք ունեցողներին պարտատոմսերով վճարելու առաջարկով՝ ներկայացնելով հետևյալ տեղեկությունները՝

ա) զուտ բացասական դիրք ունեցող Շուկայի մասնակիցների վերաբերյալ՝ ժամկետային վարկերի մարման գծով զուտ պարտավորությունը, առկա դրամային միջոցները և պակասող գումարը,

բ) տվյալ օրը մարվող ժամկետային վարկերի մայր գումարների և տոկոսագումարների մասով զուտ դրական (ստացվելիք) դիրք ունեցող Շուկայի մասնակիցների առևտրային կոդերը և դրական դիրքի չափը:

- 4) Դեպոզիտարիան իր կանոններին համապատասխան սույն գլխի 3) կետի ա) ենթակետով սահմանված պակասող գումարի չափով զուտ դրական դիրք ունեցողներին տրամադրում է պետական պարտատոմսեր և Օպերատորի հետ կնքված պայմանագրով սահմանված կարգով Օպերատորին մինչև ժամը 15:50-ը տրամադրում է զուտ դրական դիրք ունեցողներին դրամով վճարվող միջոցների չափի մասին տվյալները, որոնց հիման վրա Օպերատորը մինչև ժամը 16:00-ը կատարում է ժամկետային վարկային ռեսուրսներով կնքված գործարքների մարման հետ կապված վերջնահաշվարկը, ինչպես նաև զրոյացնում է իր դրամային առևտրային հաշիվը:

- 5) Տեխնիկական կամ որևէ այլ պատճառով սույն գլխի 1) կետում նշված ժամկետները չպահպանելու դեպքում համապատասխանաբար երկարաձգվում են սույն գլխի 2) – 4) կետերում սահմանված ժամկետները: Անհրաժեշտության դեպքում Օպերատորը դիմում է Հաշվարկային բանկին՝ խնդրելով հետաձգել Հաշվարկային բանկի գործառնական օրվա փակումը մինչև վերջնահաշվարկի ամբողջական կատարումը:

Գլուխ 9. Պատասխանատվությունը

- 1) Օպերատորը ՀՀ օրենսդրությամբ, իր և Շուկայի մասնակիցների միջև կնքված պայմանագրով սահմանված դեպքերում, կարգով և չափով պատասխանատվություն է կրում ժամկետային վարկային ռեսուրսների հարթակում կնքված գործարքների քլիրինգի և վերջնահաշվարկի հետ կապված իր պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:
- 2) Սույն կանոններին համապատասխան Շուկայի մասնակիցների կողմից Օպերատորի առևտրային հաշիվներին փոխանցված միջոցները Օպերատորի կողմից կարող են օգտագործվել բացառապես Շուկայում կնքված գործարքների արդյունքում Շուկայի մասնակիցների կողմից ստանձնած պարտավորությունների կատարման համար:
- 3) Սույն կանոններով սահմանված պահանջների խախտման համար Շուկայի համապատասխան մասնակիցը պատասխանատվություն է կրում սույն կանոններով, ինչպես նաև Օպերատորի և Շուկայի տվյալ մասնակցի միջև կնքված պայմանագրով և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով:
- 4) Սույն կանոնների 7-րդ գլխի 8) կետի պահանջը չկատարելու դեպքում Շուկայի մասնակիցը պատասխանատու է դրա հետևանքով առաջացած իրական վնասների համար:
- 5) Եթե արտարժույթի հետառևտրային նստաշրջանի ավարտից հետո սույն կանոնների 6-րդ գլխի 2) կետին համապատասխան հաշվարկված՝ Օպերատորի առևտրային հաշվից փոխանցման ենթակա դրամային միջոցների գումարը շուկայի որևէ մասնակցի համար բացասական նշանակություն ունի, ապա Օպերատորը շուկայի տվյալ մասնակցին տուգանում է 100,000 ՀՀ դրամով: Տուգանք նշանակելու մասին որոշումը կայացվում է Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի կողմից: Տուգանման որոշման օրը Օպերատորը համապատասխան հաշիվ ապրանքագիր է ներկայացնում տուգանված Մասնակցին: Մասնակիցը հաշիվ ապրանքագիրը ստանալու պահից 5 բանկային օրվա ընթացքում պարտավոր է իրականացնել համապատասխան տուգանքի վճարումը Օպերատորին:

Գլուխ 10. Կանոններում փոփոխությունները և լրացումները

- 1) Սույն կանոններում փոփոխություններն ու լրացումները դրա անբաժանելի մասն են և ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով, եթե այլ բան սահմանված չէ սույն կանոններով:
- 2) Սույն կանոններով սահմանված ծառայություններն Օպերատորը կարող է մատուցել ՀՀ կենտրոնական բանկում սույն կանոնները գրանցվելուց հետո՝ Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ սահմանված օրվանից՝ կանոնների դրույթների կիրարկումն ապահովող բոլոր փաստաթղթերի և պայմանագրերի ստորագրումից հետո:

Հաստատված է
«ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ
դիտորդ խորհրդի որոշմամբ

_____ **Կոնստանտին Սարոյան**

«13» հունիսի 2012թ.

ք. Երևան

ՆՕԱ-01/002Լ